

լոյս հանեց, Եւրոպացի և Տաճիկ մտնարանք քաշ
 դուրս 3—4 դշ խճուցին, աստլ ալ Ազգային
 Հիւանդանոցը աշխարհի մեծ ծառայութիւն մը
 բարիք մ'ըրաւ. զի Տաճկաստանի մէջ ամբողջ
 մոմերուն զինը իջեցուց, Հասկցաք, բարեկամս,
 հիմա թէ՛ Տաճկաստանցի արհեստաւորը Եւրո-
 պացի արհեստաւորին հետ միցեկէն զատ՝ զայն
 իրեն իսկ հետեւելի կընէ եղերս Այսպէս լինելէն
 յետոյ և իրրև Հայ մը, Հայ հաստատութիւն մը
 այսչափ համրակ սեպտիտութեամբ դատենէզ
 վերջը՝ ձեզ կը թողում կշուել և վճուել թէ
 Ազգային մեծ շահ մը ազգերացեող այսպիսի գոր-
 ծատունէ մը ելած ապրանքներն հրապարակաւ
 հասարակաց ծառայութեան անպէտ բան մը հը-
 բատարակելը՝ (որ գործատան մը վարկը կոտ-
 րել ըսել է, և այսպիսի վարկ կոտորելներ « քա-
 ղաքակրթութեան », մէջ չկայ անշուշտ,) ի՛նչ
 ծանր կշիռ ու հետեւութիւն ունի, գործատան
 տէրն եղիք ու մտածեցէք:

Ա. ԼՈՒՍՆԵԱՆ.

Օրագիր.

ՄԱՏՈՒՌ.

Հետեւեալը ուրախութեամբ ընթեր-
 ցանք Փոփոխ լրագրոյ մէջ:

Երամեան վտեմտիայը Աբրահամ՝ պէյ ուզելով
 յաւերժական յիշատակ մը թողուլ Արմաշի վա-
 նուց մէջ ալ, բարեհաճեր է խոստանալ նորա-
 կառոյց եկեղեցւոյն մէջ մատուռ մը շինել տալ,
 որոյ համար առ նուազն 500 լիրա ծախք կլայ:

Նորին Ասեմութիւնն այսպէս յիշեալ վանքին
 երևելի բարերարաց կարգը կանցնի, և քաջայոյս
 եմք, թէ իսնալով այս վանքին միաբանական
 Աւետիս արժանիքն և մեղուզան անդու ջանա-
 ցողութիւնն՝ ուրիշ շատ ձեռնտուութիւններ ալ
 պիտի ընէ ի քաջապիտութիւն Միաբանութեան:

Փունջ Թ. 837, Կոնս. 10

ԸՆԳԷ. ԺՈՂՈՎ., — ԸՆՏԲՈՒԹԻՒՆ

ՔԱՂ. ԺՈՂՈՎ. ՈՅ.

11. Պօլսոյ մերազնեայց մջ ծաղած
 դժտութիւն և յուղմունք ընդերլար չը
 տեւելով՝ ուրախ եմք՝ զի շնորհիւ եռան-
 դուն և ողջամիտ ազգայնոց ոմանց՝ խա-
 ղազութիւնն վերահաստատեցաւ նոցա
 մէջ, և ազգային Աւարչութիւնն կազմուե-
 լով՝ Վեր, Նիկողայոս Ս. Արքեպիսկո-
 պոս Պատրիարքական Տեղապահ ընտր-
 վեցու, և գործերն սկսան իւրեանց օրի-
 նաւոր ընթացքները շարունակել:

Այս առթիւ Տաճկ. Հայոց Ազգ. Սահ-
 մանագրութիւնն մի մեծ և փառաւոր յաղ-
 թանակ տարաւ ընդդէմ Դիմակաւոր և
 ազգաշին ոմանց անձանց զիշերաջան ճը-
 գանց, և սպառնալից փոթորիկներն և
 վտանգներն ջնջուեցան և անհետացան:

Աստ արժան կհամարիմք Բ. Գոսան
 վերջին հրամանագրէն յետոյ գումարեալ
 Երեսփ. Ընդ. Ժողովոյ վերայ հետեւեալ
 տեղեկութիւնքը քաղել Փոփոխ, յորում
 է նա և նորընտիր Վաղարշական Ժողովոյ
 համար եղած քուէարկութիւնը, որում
 կը կցեմք հետեւեալ Ընդ. Ժողովոյ մէջ
 քուէարկուած Վաղ. Ժողովոյ լրացու-
 ցիչ անգամոց ցուցակն ևս:

Երէկ (Նոյ. 16) ժամը 7 1/2-ին բացուեցաւ Ե-
 րեսփոխանական Ընդհանուր Ժողովոյ ատեանը
 ատենապետութեամբ Աղարեցեան Սարգիս էֆէն-
 սիի, ինքեպոյթեան 60 էն աւելի Երեսփոխա-
 նաց՝ որ հետզհետէ 80ի չափ եղաւ, և ի ներկա-
 յութեան հազարաւոր ունկնդրաց:

Նախ քան զամենայն՝ Կրօնական Ժողովոյ ա-
 տենապետ Սրբազանը ծանոյց Բ. Գրեկն եկած
 եպարքոսական հրամանագրոյն խնասար, և խընդ-
 րեց որ ըստ այնմ վարուի ժողովը և պատրիար-
 քարանը ներկայ տարաւմ վիճակէն ելնէ: